



ԲՆԱՊԱՀՊԱՆԱԿԱՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Կայուն զարգացմանն առնչվող՝ Լիդիան ընկերության պարտավորությունը

Լիդիան Ինթերնեյշնլ և իր վերահսկվող դուստր ձեռնարկությունները («Ընկերություն» կամ «Լիդիան») ձգտում են կայուն զարգացման¹ արդյունքների և պարտավորվում ծրագրերի զարգացման և շահագործման բոլոր փուլերում և ընթացակարգերում ներառել բնապահպանական, առողջության, անվտանգության և սոցիալական խնդիրները:

Որպես այդ հանձնառության մաս, Լիդիանը մշակել է սոցիալական, բնապահպանական, աշխատանքի առողջության և անվտանգության, ինչպես նաև մարդկային ռեսուրսների քաղաքականություններ:

Ընկերության բնապահպանական քաղաքականություն

Լիդիան ընկերության նպատակն է միջազգայնորեն ճանաչված բիզնեսի լավագույն փորձին համապատասխան նվազագույնի հասցնել և մեղմել շրջակա միջավայրի վրա բացասական ազդեցությունները: Բնապահպանական քաղաքականության և ընկերության համապատասխան բնապահպանական ընթացակարգերի իրականացումը առանցքային պահանջ է Օրագրի զարգացման բոլոր փուլերում:

Բնապահպանական առաջնային խնդիրները և մտահոգությունները թափանցիկ, միահամուռ ուժերով, բաց և կառուցողական եղանակով կարգավորելու նպատակով Ընկերությունը կհամագործակցի վերահսկող մարմինների և այլ շահագրգիռ կողմերի, այդ թվում Օրագրի ազդակիր համայնքների հետ:

Կայուն զարգացման արդյունքների՝ իր հանձնառության շրջանակներում Լիդիան ընկերությունը բավարար ռեսուրսներ կներդնի իր յուրաքանչյուր աշխատանքների նախագծման, կառուցման, շահագործման և փակման ընթացքում բնապահպանական կառավարման պարտավորությունների կատարումն ապահովելու համար: Նշված պարտավորությունները կարտացոլեն ճկուն կառավարման գործընթացի արդյունքները և մեղմացման մեխանիզմի պատշաճ կիրառումը, որտեղ շեշտը դրվում է տեղում բացասական ազդեցությունից խուսափելու վրա: Ընկերության նպատակն է նաև իր գործողությունների ընթացքում տնտեսապես նպատակահարմարության սահմաններում նպաստել ջրի, էներգիայի, նյութերի և այլ ռեսուրսների արդյունավետ օգտագործմանը:

Սույն բնապահպանական քաղաքականության միասին Ընկերությունը մշակել է շրջակա միջավայրի պահպանման միջոցառումների մի քանի հայեցակետ՝ առանցքային պահանջները սահմանելու և միջազգային քաղաքականություններին ու նորմերին համապատասխանությունն ապահովելու նպատակով:

Համապատասխանություն

Ընկերությունն իր գործունեությունը կնախագծի և կիրականացնի բնապահպանական խնդիրներին առնչվող՝ Հայաստանի Հանրապետության համապատասխան տեղական և պետական օրենքների ու կանոնակարգի համաձայն՝ միաժամանակ հետևելով Համաշխարհային բանկի խմբի/Միջազգային Ֆինանսական Կորպորացիայի և Զարգացման և Վերակառուցման Եվրոպական Բանկի պահանջներին:

Լիդիանը պահանջում է իր խորհրդատուներին, կապալառուներին, մատակարարներին և դուստր ձեռնարկություններին ընդունել սույն բնապահպանական քաղաքականության սկզբունքները որպես նվազագույն չափանիշ: Այս նվազագույն պահանջից բացի Ընկերությունը կարող է որոշել կամավոր պարտավորություններ վերցնել՝ ավելի խիստ պահանջներ կատարելու համար:

¹ «Գործընթաց, որտեղ հաշվի են առնվում ներկայիս պահանջները՝ չգրկելով գալիք սերունդներին իրենց պահանջները բավարարելու հնարավորությունից:»

Տեղեկատվության ապահովում և իրազեկվածություն

Ընկերությունն իր աշխատակիցներին, կապալառուներին և մատակարարներին կփոխանցի սույն քաղաքականությունը՝ Ընկերության պարտավորությունների և պարտականությունների վերաբերյալ նրանց իրազեկվածությունը ապահովելու նպատակով: Ընկերությունը անձնակազմի համար կանցկացնի վերապատրաստման դասընթացներ քաղաքականության պահանջների վերաբերյալ իրազեկմանը և դրանց ճիշտ կիրառմանը նպաստելու նպատակով: Լիդիանը իր կապալառուներից ակնկալում է նման միջոցառումների կիրառում:

Շարունակական բարելավում

Ընկերությունը պարբերաբար կվերանայի իր բնապահպանական քաղաքականությունը և անհրաժեշտության դեպքում այն կթարմացվի: Ընկերությունը պարբերաբար կթարմացնի կամ կբարելավի նաև իր բնապահպանական, սոցիալական, առողջության և անվտանգության կառավարման համակարգը՝ պարբերական, համակարգված, ներքին բնապահպանական աուդիտի միջոցով: Այն աուդիտի արդյունքները կօգտագործի որպես հիմք՝ ավելի ճկուն կառավարման գործընթացի միջոցով բնապահպանական գործունեության շարունակական բարելավման համար:

Աղտոտման կանխարգելում

Ընկերությունը հենց նախագծման փուլից կպլանավորի յուրաքանչյուր նոր ծրագրի ուսումնասիրությունը, շինարարությունը, շահագործումը, փակումն ու վերականգնումը: Լիդիանը նպատակ ունի բնապահպանական կառավարման պլանների իրականացման շնորհիվ աղտոտման վերահսկողություն մտցնել և նվազագույնի հասցնել շրջակա միջավայրի վրա ընկերության գործունեությունից առաջացող ազդեցությունները: Նշված պլանները պարունակում են աշխատանքների բոլոր ուղղությունները ներառող ընթացակարգեր, ինչպես նաև միտված են ապահովելու օրենսդրությանն ու Ընկերության պահանջներին համապատասխանության ապահովմանը: Լիդիանը պարտավորվում է շրջակա միջավայրի վրա ազդեցության կառավարման միջոցառումներ իրականացնել՝ հնարավորության դեպքում իր տեղամասերում գործողությունների արդյունքում աղտոտումից խուսափելու համար:

Ջուր

Լիդիան ընկերությունը ջրային ռեսուրսների պահպանման ու պատասխանատու կառավարման կարևորությունը համարում է որպես բիզնեսին, շրջակա միջավայրին և հասարակությանն առնչվող հիմնական խնդիր: Ուստի այն նպատակ ունի մշակել ծրագրեր՝ չնվազեցնել ջրային ռեսուրսները և դրանցից կախված էկոհամակարգերը, այդ թվում այն էկոհամակարգերը, որոնցից կախված է բիզնեսի հաջողությունը, նրանք, որոնցով պայմանավորված է մարդկանց ապրելակերպը կամ բարեկեցությունը, ինչպես նաև այն էկոհամակարգերը, որոնք կախված են ջրից:

Ընկերությունը ակտիվ կերպով պլանավորում է յուրաքանչյուր նոր ծրագրի հենց նախագծման փուլում նվազագույնի հասցնել ջրի օգտագործումը երկրաբանական ուսումնասիրության, շինարարության, շահագործման, փակման և վերականգնման ընթացքում: Կձգտենք կառավարման միջոցներ կիրառել ջրային ռեսուրսների վրա մեր ծրագրի ազդեցությունը նվազագույնի հասցնելու ուղղությամբ: Լիդիանի նպատակն է իր գործողությունների արդյունքում որևէ էական ազդեցություն չթողնել ջրային ռեսուրսների վրա և պարտավորվում է կառավարել իր գործողությունների հետևանքով ջրերի ծավալների վրա ազդեցությունը՝ խուսափելու առկա ջրային ռեսուրսների փոփոխություններից, որոնք կարող են ազդել նշված ռեսուրսները օգտագործողների կամ դրանցից կախված էկոհամակարգերի վրա:

Կենսաբազմազանություն

Լիդիան ընկերությունը կենսաբազմազանության պահպանման ու պատասխանատու կառավարման կարևորությունը համարում է որպես բիզնեսին և հասարակությանն առնչվող առանցքային խնդիր: Լիդիանի մոտեցումը ողջամիտ կառավարումն է: Ուստի ընկերությունը նպատակ ունի մշակել այնպիսի ծրագրեր, որոնք չեն վատթարացնի թե այն էկոհամակարգերը, որոնցից է կախված աշխատանքների հաջողությունը և թե նրանք, որոնցից կախված է բարեկեցությունը կամ ապրելակերպը: Մասնավորապես, Լիդիանի

նպատակն է կենսաբազմազանության կամ էկոհամակարգի ծառայությունների <ՈՉ ՄԻ ԿՈՐՈՒՄՏ> չունենալ իր գործողությունների արդյունքում:

Ընկերությունը պարտավորվել է բնապահպանական և սոցիալական հարցերի հետ կապված որոշում կայացնելիս, ինչպես նաև կայուն զարգացման ելքեր փնտրելիս հաշվի առնել կենսաբազմազանության պահպանման խնդիրները:

Սույն քաղաքականությունը Տնօրենների խորհրդի կողմից հաստատվել է 2016թ. օգոստոսի 17-ին: